ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 12-ին ժամը 17:21:27-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 13-ին ժամը 12:45-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարգելի պատվիրատու,
Շրջակա միջավայրի նախարարության կողմից հայտարարված «Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների» ձեռքբերման գնանշման հարցման մրցույթին (ծածկագիր՝ ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03) լիարժեք և հիմնավորված մասնակցություն ապահովելու համար խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը.

Հարցադրում N 1: Վերջին տարվա սպասարկման ընթացքում համակարգի հետ կապված ի՞նչ փոփոխություններ և ի՞նչ աշխատանքներ են կատարվել:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և չի առնչվում տեխնիկական բնութագրի պայմաններին:

Հարցադրում N 2: Տեխնիկական բնութագրում նշված է՝ «Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը Հարթակի սպասարկման և աշխատանքների կատարման համար», խնդրում ենք պարզաբանել ի՞նչ իրավական փաստաթղթեր պետք է ունենա կատարողը ծրագրային սպասարկումն իրականացնելու համար:

Պարզաբանում N 2: Պարզաբանման հարցմամբ ներկայացված հարցի հիման վրա Տեխնիկական բնութագիրը կվերանայվի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով